

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ

ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿԱԳԻՐ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ

Ամերիկայի Միացյալ Նահանգները ունի **ազատ առևտրի մասին համաձայնագրեր** հետևյալ երկրների հետ.

- **Ավստրալիա**
- **Բահրեյն**
- **Կանադա**
- **Հոնդուրաս**
- **Կորեա**
- **Մեխիկո**
- **Նիկարագուա**
- **Պանամա**
- **Սինգապուր**
- **Կոստա-Ռիկա**
- **Դոմինիկայի Հանրապետություն**
- **Էլ Սալվադոր**
- **Գվատեմալա**
- **Իսրայել**
- **Հորդանան**
- **Մարոկկո**
- **Օման**
- **Պերու**

Ամերիկայի Միացյալ Նահանգների ազատ առևտրի համաձայնագրերին կարող եք ծանոթանալ այստեղ՝

https://ustr.gov/trade-agreements/free-trade-agreements

[Ամերիկայի Միացյալ Նահանգների ազատ առևտրի համաձայնագրերը]

Ամերիկայի Միացյալ Նահանգներում գործում են 200-ից ավել ազատ տնտեսական գոտիներ, որոնք առավել հայտնի են որպես արտաքին առևտրի գոտիներ: Առավել մանրամասն կարող եք ծանոթանալ այստեղ՝

https://www.cbp.gov/border-security/ports-entry/cargo-security/cargo-control/foreign-trade-zones/about

https://enforcement.trade.gov/ftzpage/201up.html

[Ծանոթություն ԱՄՆ ազատ առևտրի գոտիներին]

1995 **թվականից Ամերիկայի Միացյալ Նահանգները հանդիսանում է ԱՀԿ անդամ:**

Ամերիկայի Միացյալ Նահանգները Հայաստանին տրամադրում է Արտոնությունների ընդհանրացված համակարգից օգտվելու հնարավորություն /GSP/:

ԱՄՆ-ի կողմից տրամադրվող Արտոնությունների ընդհանրացված համակարգի ապրանքների ցանկը իր մեջ ներառում է մի շարք քիմիական նյութեր, հանքանյութեր, ոսկերչական արտադրանք, գորգերի մի շարք տեսակներ, ինչպես նաև մի շարք գյուղատնտեսական ապրանքների և ձկնամթերք:

Ամերիկայի Միացյալ Նահանգների ներմուծման մաքսատուրքերին, ինչպես նաև հատուկ մաքսատուրքերի ցանկին կարող եք ծանոթանալ այստեղ՝

https://hts.usitc.gov/current

[Ներմուծման մաքսատուրքերի ներդաշնակեցված համակարգ]

ԱՄՆ-ի կողմից Հայաստանին տրամադրվող արտոնությունների ընդհանրացված համակարգի/GSP/ պրեզենտացիան ներկայացված է ստորև.

ԱՄՆ-ում արտահանման գործընթացը կարող է լինել լիցենզավորվող՝ կախված արտահանվող ապրանքների տեսակներից: Արտահանման լիցենզավորվող գործունեություն ծավալելու համար արտահանողը պետք է գրանցվի Նահանգային գրասենյակում և ստանա արտահանման լիցենզիա:

ԱՄՆ ապրանքների, այդ թվում՝ հատուկ կարգավիճակ ունեցող ապրանքների ներմուծման վերաբերյալ մանրամասն տեղեկատվությանը կարող եք ծանոթանալ այստեղ՝

https://www.cbp.gov/sites/default/files/documents/Importing%20into%20the%20U.S.pdf

[Ներմուծումը Ամերիկայի Միացյալ Նահանգներ. Ուղեցույց առևտրային ներմուծողների համար]

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԱՌԵՎՏՐԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Հանրապետության առևտրաշրջանառությունը Միացյալ Նահանգների հետ 2016 թվականին կազմել է 126.9 մլն. ԱՄՆ դոլար, ինչը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 21%-ով (2015 թվականին

կազմել է 160.6 մլն. ԱՄՆ դոլար): 2016 թվականին արտահանումը Հայաստանի Հանրապետությունից Միացյալ Նահանգներ կազմել է 38,8 մլն ԱՄՆ դոլար, ինչը նախորդ տարի նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 26,7 %-ով (2015 թվականին կազմել է 52,9 մլն. ԱՄՆ դոլար): 2016 թվականին Միացյալ Նահանգներից Հայաստանի Հանրապետություն ներմուծումը, ըստ ծագման երկրի հատկանիշի, կազմել է 88,1 մլն.ԱՄՆ դոլար, ինչը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 18,2%-ով (2015 թվականին կազմել է 107,6 մլն. ԱՄՆ դոլար), ըստ առևտուր անող երկրի հատկանիշի ներմուծումը կազմել է 73,3 մլն. ԱՄՆ դոլար, ինչը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 32,7%-ով (2015 թվականին կազմել 107,3 մլն. ԱՄՆ դոլար):

2016 թվականին Հայաստանի Հանրապետությունից Միացյալ Նահանգներ արտահանված առավելագույն մաքսային արժեք ունեցող ապրանքներն են՝

- **պղնձի հանքաքար և խտահանք**,
- **թանկարժեք մետաղի հանքաքար ու խտահանք**,
- **թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր**,
- **ալկոհոլային խմիչքներ**,
- **հանքային ջրեր:**

2016 թվականին Միացյալ Նահանգներից Հայաստանի Հանրապետություն հիմնականում ներմուծվել են հետևյալ ապրանքատեսակները՝

- **հեռախոսներ**,
- **համակարգիչներ**, **մոնիտորներ և պրոյեկտորներ**,
- **կոշկեղեն**,
- **հագուստ**,
- **երկաթից հարթ գլանվածք:**